Հավելված N 3
Երևանի քաղաքապետի
29 հուլիսի 2009թ
N 7149-Ա որոշման

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԳԼԽԱՎՈՐ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԻ

1.2-2
(ծածկագիրը)

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի (այսուհետ՝ աշխատակազմ) Երևան քաղաքի գլխավոր ճարտարապետի պաշտոնն ընդգրկվում է համայնքային ծառայության գլխավոր պաշտոնների խմբի 2-րդ ենթախմբում:

2.Աշխատակազմի Երևան քաղաքի գլխավոր ճարտարապետին (այսուհետ՝ գլխավոր ճարտարապետ) «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով (այսուհետ՝ օրենք) սահմանված կարգով պաշտոնում նշանակում և պաշտոնից ազատում է Երևանի քաղաքապետը (այսուհետ՝ քաղաքապետ):

2. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ՂԵԿԱՎԱՐՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

3. Գլխավոր ճարտարապետն անմիջականորեն ենթակա և հաշվետու է աշխատակազմի քարտուղարին:

4. Գլխավոր ճարտարապետի բացակայության դեպքում նրան փոխարինում է աշխատակազմի ստորաբաժանումների պետերից մեկը՝ քաղաքապետի որոշմամբ:

Օրենքով նախատեսված դեպքերում գլխավոր ճարտարապետին փոխարինում է համայնքային ծառայության կադրերի ռեզերվում գտնվող՝ սույն պաշտոնի անձնագրի պահանջները բավարարող անձը, իսկ դրա անհնարինության դեպքում այլ անձը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում:

5. Գլխավոր ճարտարապետը՝

ա) քաղաքապետի հանձնարարությամբ մասնակցում է գլխավոր ճարտարապետի առջև դրված գործառույթներից բխող՝ աշխատակազմի ընթացիկ գործունեության կազմակերպմանը, ծրագրմանը, համակարգմանը, ղեկավարմանը և վերահսկման աշխատանքներին.

բ) կատարում է Երևանի քաղաքապետի կողմից վարվող քաղաքականության մասով քաղաքապետի, համայնքային ծառայության ղեկավարման և կազմակերպման մասով աշխատակազմի քարտուղարի հանձնարարականները:

գ) պատասխանատվություն է կրում իրավական ակտերի պահանջները և իրեն վերապահված լիազորությունները, աշխատակազմի առջև դրված խնդիրները և տրված հանձնարարականները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, լիազորությունները վերազանցելու համար:

3. ՈՐՈՇՈՒՄՆԵՐ ԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

6. Գլխավոր ճարտարապետը՝

ա) լուծում է գլխավոր ճարտարապետի առջև դրված գործառույթներից բխող հիմնախնդիրներ, ընդունում որոշումներ.

բ) իր լիազորությունների շրջանակներում աշխատակազմի համապատասխան ստորաբաժանումների պետերին և այլ պաշտոններ զբաղեցնող անձանց տալիս է համապատասխան ցուցումներ և հանձնարարականներ:

4. ՇՓՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆԸ

7. Գլխավոր ճարտարապետը՝

ա) աշխատակազմի ներսում իր լիազորությունների շրջանակներում շփվում է Երևանի քաղաքապետի, Երևանի ավագանու անդամների, աշխատակազմում հայեցողական պաշտոններ զբաղեցնող անձանց, աշխատակազմի համայնքային ծառայողների և տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց հետ.

բ) քաղաքապետի հանձնարարությամբ մասնակցում է այլ մարմիններում կազմակերպված նիստերին (խորհրդակցություններին) .

գ) աշխատակազմից դուրս շփվում և պարբերաբար հանդես է գալիս որպես ներկայացուցիչ, մասնակցում է Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների, Հայաստանի Հանրապետության այլ համայնքների, միջազգային և այլ կազմակերպությունների իրավասու մարմինների ներկայացուցիչների հետ հանդիպումներին, խորհրդակցություններին, գիտաժողովներին, սեմինարներին, ինչպես նաև հանդես է գալիս առաջարկություններով, զեկուցումներով և այլն:

5. ԽՆԴԻՐՆԵՐԻ ԲԱՐԴՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄԸ

8. Գլխավոր ճարտարապետը `

ա) քաղաքապետի հանձնարարությամբ մասնակցում է տեղական ինքնակառավարման մարմինների ռազմավարական և կազմակերպական նշանակության խնդիրների բացահայտմանը, վերլուծմանը, ինչպես նաև դրանց ստեղծագործական և այլընտրանքային լուծումներ տալու աշխատանքներին.

բ) բացահայտում, վերլուծում և գնահատում է աշխատակազմի ռազմավարական և կազմակերպական նշանակության խնդիրներ, ինչպես նաև դրանց տալիս է ստեղծագործական և այլընտրանքային լուծումներ.

գ) քաղաքապետին է ներկայացնում առաջարկություններ՝ աշխատակազմի գործունեության հիմնական ուղղությունների վերաբերյալ:

6. ԳԻՏԵԼԻՔՆԵՐԸ ԵՎ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

9. Գլխավոր ճարտարապետը՝

ա) ունի բարձրագույն կրթություն, համայնքային ծառայության կամ քաղաքացիական ծառայության առնվազն առաջատար պաշտոնների 2-րդ ենթախմբում առնվազն երկու տարվա ստաժ կամ առնվազն հինգ տարվա համայնքային ծառայության ստաժ և համայնքային ծառայության 2-րդ դասի առաջատար ծառայողի դասային աստիճան կամ առնվազն հինգ տարվա քաղաքացիական ծառայության ստաժ և քաղաքացիական ծառայության 2-րդ դասի առաջատար ծառայողի դասային աստիճան կամ վերջին չորս տարվա ընթացքում քաղաքական կամ հայեցողական, կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն երկու տարվա աշխատանքային ստաժ կամ վերջին հինգ տարվա ընթացքում համայնքի ավագանու անդամի աշխատանքային գործունեության առնվազն երեք տարվա փորձ կամ գիտական աստիճան և առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ մինչև 2015 թվականի հունվարի 1-ը համայնքային ծառայության, պետական կառավարման ոլորտի կամ համայնքային ենթակայության հիմնարկների ղեկավար պաշտոններում առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ.

բ) ունի «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին», «Համայնքային ծառայության մասին», «Տեղական ինքնակառավարման մասին», Հայաստանի Հանրապետության օրենքների, աշխատակազմի կանոնադրության և իր լիազորությունների հետ կապված այլ իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.

գ) տիրապետում է անհրաժեշտ տեղեկատվությանը.

դ) ունի համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն.

ե) տիրապետում է ռուսերենին (ազատ).

7. ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

10. Գլխավոր ճարտարապետը՝

ա) օժանդակում է Երևանի քաղաքապետին քաղաքաշինության բնագավառում քաղաքականության իրականացմանը.

բ) Երևանի քաղաքապետին է ներկայացնում Երևանի քաղաքապետարանի քաղաքաշինության ոլորտի աշխատանքային ծրագրերը.

գ) ներկայացնում է առաջարկություն քաղաքաշինական գործունեության կանոնակարգման վերաբերյալ.

դ) իր լիազորությունների շրջանակում հանձնարարություններ է տալիս Աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության (այսուհետ՝ Վարչություն) պետին.

ե) ապահովում է շենքերի և շինությունների կառուցման, վերակառուցման վերաբերյալ ֆիզիկական և իրավաբանական անձանց հայտերի ուսումնասիրությունը , համաձայնեցման է ներկայացնում նախագծերի մշակման համար հիմք հանդիսացող ճարտարապետահատակագծային առաջադրանքներ, դրա հիման վրա մշակված նախագծերը, շինարարության (քանդման) թույլտվությունները.

զ) ապահովում է քաղաքի կառուցապատման ծրագրերի մշակումը և ձևակերպումը Վարչության կառուցապատման ծրագրերի մշակման և ձևակերպման բաժնի միջոցով.

է) Երևանի քաղաքապետի հանձնարարությամբ վերահսկում է Վարչության առջև դրված գործառույթներից և խնդիրներից բխող իրավական ակտերի նախագծեր, առաջարկություններ, եզրակացություններ, այլ փաստաթղթեր նախապատրաստելը, ինչպես նաև դրանց վերաբերյալ մեթոդական պարզաբանումներ և ուղեցույցեր մշակելը.

ը) Երևանի քաղաքապետի հանձնարարությամբ կատարում է քաղաքացիների ընդունելություն.

թ) այլ մարմիններից, պաշտոնատար անձանցից ստանում է Երևանի քաղաքապետարանի քաղաքաշինական գործառույթների և խնդիրների իրականացման հետ կապված անհրաժեշտ տեղեկատվություն և նյութեր.

ժ) ստորագրում է Գլխավոր ճարտարապետի լիազորությունների իրականացման շրջանակներում պատրաստվող փաստաթղթերը.

ժա) Գլխավոր ճարտարապետի լիազորությունների շրջանակներում՝ Վարչության կառուցապատման ծրագրերի մշակման և ձևակերպման բաժնի միջոցով, նախապատրաստում է առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, միջնորդագրեր, զեկուցագրեր և այլ գրություններ.

ժբ) Աշխատակազմի քարտուղարին, ըստ անհրաժեշտության ներկայացնում է առաջարկություններ Վարչության աշխատանքներին մասնագետներ, փորձագետներ, գիտական հաստատությունների ներկայացուցիչներ ներգրավելու, ինչպես նաև աշխատանքային խմբեր կազմավորելու համար.

ժգ) Երևանի քաղաքապետարանի քաղաքաշինական գործառույթների և խնդիրների իրականացման հետ կապված, ինչպես նաև քաղաքապետի գիտությամբ, կարող է հրավիրել խորհրդակցություններ, դրանց մասնակից դարձնելով համապատասխան մարմինների պաշտոնատար անձանց, մասնագետների, փորձագետների.

ժդ) ըստ անհրաժեշտության ներկայացնում է համապատասխան զեկուցումներ՝ իր կողմից սպասարկվող ոլորտին առնչվող համապատասխան մարմիններում, ինչպես նաև պաշտոնատար անձանց կողմից կատարվող աշխատանքների վիճակի մասին.

ժե) իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ.

Գլխավոր ճարտարապետն ունի օրենքով, այլ իրավական ակտերով նախատեսված այլ իրավունքներ և կրում է այդ ակտերով նախատեսված պարտականություններ:

8. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՅԻՆ ԱՍՏԻՃԱՆԸ

11. Գլխավոր ճարտարապետին օրենքով սահմանված կարգով շնորհվում է Հայաստանի Հանրապետության համայնքային ծառայության 2-րդ դասի խորհրդականի դասային աստիճան:

Հավելված N 3
Երևանի քաղաքապետի
29 հուլիսի 2009թ
N 7149-Ա որոշման

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԳԼԽԱՎՈՐ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԻ

1.2-2
(ծածկագիրը)

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի (այսուհետ՝ աշխատակազմ) Երևան քաղաքի գլխավոր ճարտարապետի պաշտոնն ընդգրկվում է համայնքային ծառայության գլխավոր պաշտոնների խմբի 2-րդ ենթախմբում:

2.Աշխատակազմի Երևան քաղաքի գլխավոր ճարտարապետին (այսուհետ՝ գլխավոր ճարտարապետ) «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով (այսուհետ՝ օրենք) սահմանված կարգով պաշտոնում նշանակում և պաշտոնից ազատում է Երևանի քաղաքապետը (այսուհետ՝ քաղաքապետ):

2. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ՂԵԿԱՎԱՐՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

3. Գլխավոր ճարտարապետն անմիջականորեն ենթակա և հաշվետու է աշխատակազմի քարտուղարին:

4. Գլխավոր ճարտարապետի բացակայության դեպքում նրան փոխարինում է աշխատակազմի ստորաբաժանումների պետերից մեկը՝ քաղաքապետի որոշմամբ:

Օրենքով նախատեսված դեպքերում գլխավոր ճարտարապետին փոխարինում է համայնքային ծառայության կադրերի ռեզերվում գտնվող՝ սույն պաշտոնի անձնագրի պահանջները բավարարող անձը, իսկ դրա անհնարինության դեպքում այլ անձը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում:

5. Գլխավոր ճարտարապետը՝

ա) քաղաքապետի հանձնարարությամբ մասնակցում է գլխավոր ճարտարապետի առջև դրված գործառույթներից բխող՝ աշխատակազմի ընթացիկ գործունեության կազմակերպմանը, ծրագրմանը, համակարգմանը, ղեկավարմանը և վերահսկման աշխատանքներին.

բ) կատարում է Երևանի քաղաքապետի կողմից վարվող քաղաքականության մասով քաղաքապետի, համայնքային ծառայության ղեկավարման և կազմակերպման մասով աշխատակազմի քարտուղարի հանձնարարականները:

գ) պատասխանատվություն է կրում իրավական ակտերի պահանջները և իրեն վերապահված լիազորությունները, աշխատակազմի առջև դրված խնդիրները և տրված հանձնարարականները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, լիազորությունները վերազանցելու համար:

3. ՈՐՈՇՈՒՄՆԵՐ ԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

6. Գլխավոր ճարտարապետը՝

ա) լուծում է գլխավոր ճարտարապետի առջև դրված գործառույթներից բխող հիմնախնդիրներ, ընդունում որոշումներ.

բ) իր լիազորությունների շրջանակներում՝ ***քաղաքային նշանակության քաղաքաշինական գործունեության ոլորտում գործառույթներ իրականացնող և (կամ) այդ գործառույթներում հսկողական և (կամ) վերահսկողական լիազորություններով օժտված ստորաբաժանումների ղեկավարներին.*** ~~աշխատակազմի համապատասխան ստորաբաժանումների պետերին և այլ պաշտոններ զբաղեցնող անձանց~~ տալիս է համապատասխան ցուցումներ և հանձնարարականներ:

4. ՇՓՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆԸ

7. Գլխավոր ճարտարապետը՝

ա) Երևանի քաղաքապետարանի ներսում իր լիազորությունների շրջանակներում շփվում է Երևանի քաղաքապետի, Երևանի ավագանու անդամների հետ.

բ) աշխատակազմի ներսում շփվում է աշխատակազմի քարտուղարի, աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարների հետ.

գ) քաղաքապետի հանձնարարությամբ մասնակցում է այլ մարմիններում կազմակերպված նիստերին (խորհրդակցություններին) .

դ) աշխատակազմից դուրս շփվում և պարբերաբար հանդես է գալիս որպես ներկայացուցիչ, մասնակցում է Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների, Հայաստանի Հանրապետության այլ համայնքների, միջազգային և այլ կազմակերպությունների իրավասու մարմինների ներկայացուցիչների հետ հանդիպումներին, խորհրդակցություններին, գիտաժողովներին, սեմինարներին, ինչպես նաև հանդես է գալիս առաջարկություններով, զեկուցումներով և այլն:

5. ԽՆԴԻՐՆԵՐԻ ԲԱՐԴՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄԸ

8. Գլխավոր ճարտարապետը `

ա) քաղաքապետի հանձնարարությամբ մասնակցում է տեղական ինքնակառավարման մարմինների ռազմավարական և կազմակերպական նշանակության խնդիրների բացահայտմանը, վերլուծմանը, ինչպես նաև դրանց ստեղծագործական և այլընտրանքային լուծումներ տալու աշխատանքներին.

բ) բացահայտում, վերլուծում և գնահատում է աշխատակազմի ռազմավարական և կազմակերպական նշանակության խնդիրներ, ինչպես նաև դրանց տալիս է ստեղծագործական և այլընտրանքային լուծումներ.

գ) քաղաքապետին է ներկայացնում առաջարկություններ՝ աշխատակազմի գործունեության հիմնական ուղղությունների վերաբերյալ:

6. ԳԻՏԵԼԻՔՆԵՐԸ ԵՎ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

9. Գլխավոր ճարտարապետը՝

ա) ունի բարձրագույն կրթություն, համայնքային ծառայության կամ քաղաքացիական ծառայության առնվազն առաջատար պաշտոնների 2-րդ ենթախմբում առնվազն երկու տարվա ստաժ կամ առնվազն հինգ տարվա համայնքային ծառայության ստաժ և համայնքային ծառայության 2-րդ դասի առաջատար ծառայողի դասային աստիճան կամ առնվազն հինգ տարվա քաղաքացիական ծառայության ստաժ և քաղաքացիական ծառայության 2-րդ դասի առաջատար ծառայողի դասային աստիճան կամ վերջին չորս տարվա ընթացքում քաղաքական կամ հայեցողական, կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն երկու տարվա աշխատանքային ստաժ կամ վերջին հինգ տարվա ընթացքում համայնքի ավագանու անդամի աշխատանքային գործունեության առնվազն երեք տարվա փորձ կամ գիտական աստիճան և առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ մինչև 2015 թվականի հունվարի 1-ը համայնքային ծառայության, պետական կառավարման ոլորտի կամ համայնքային ենթակայության հիմնարկների ղեկավար պաշտոններում առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ.

բ) ունի «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին», «Համայնքային ծառայության մասին», «Տեղական ինքնակառավարման մասին», Հայաստանի Հանրապետության օրենքների, աշխատակազմի կանոնադրության և իր լիազորությունների հետ կապված այլ իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.

գ) տիրապետում է անհրաժեշտ տեղեկատվությանը.

դ) ունի համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն.

ե) տիրապետում է ռուսերենին (ազատ).

7. ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

10. Գլխավոր ճարտարապետը՝

ա) օժանդակում է Երևանի քաղաքապետին քաղաքաշինության բնագավառում ***ՀՀ օրենքներով և այլ իրավական ակտերով համայնքի ղեկավարին վերապահված լիազորությունների իրականացմանը.*** ~~քաղաքականության իրականացմանը.~~

բ) Երևանի քաղաքապետին է ներկայացնում Երևանի քաղաքապետարանի քաղաքաշինության ոլորտի աշխատանքային ծրագրերը.

գ) ներկայացնում է առաջարկություն քաղաքաշինական գործունեության կանոնակարգման վերաբերյալ.

դ) ~~իր լիազորությունների շրջանակում~~ ***ըստ անհրաժեշտության*** հանձնարարություններ է տալիս ~~Աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության (այսուհետ՝ Վարչություն) պետին.~~ ***քաղաքային նշանակության քաղաքաշինական գործունեության ոլորտում գործառույթներ իրականացնող և (կամ) այդ գործառույթներում հսկողական և (կամ) վերահսկողական լիազորություններով օժտված ստորաբաժանումների ղեկավարներին.***

ե) ապահովում է շենքերի և շինությունների կառուցման, վերակառուցման վերաբերյալ ֆիզիկական և իրավաբանական անձանց հայտերի ուսումնասիրությունը , համաձայնեցման է ներկայացնում նախագծերի մշակման համար հիմք հանդիսացող

ճարտարապետահատակագծային առաջադրանքներ, դրա հիման վրա մշակված նախագծերը, շինարարության (քանդման) թույլտվությունները.

զ) ապահովում է քաղաքի կառուցապատման ծրագրերի մշակումը և ձևակերպումը ~~Վարչության կառուցապատման ծրագրերի մշակման և ձևակերպման բաժնի~~ ***աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության աշխատանքների համակարգման*** միջոցով.

է) Երևանի քաղաքապետի հանձնարարությամբ վերահսկում է ~~Վարչության~~ ***քաղաքաշինական գործունեության ոլորտում իր*** առջև դրված գործառույթներից և խնդիրներից բխող իրավական ակտերի նախագծեր, առաջարկություններ, եզրակացություններ, այլ փաստաթղթեր նախապատրաստելը, ինչպես նաև դրանց վերաբերյալ մեթոդական պարզաբանումներ և ուղեցույցեր մշակելը.

ը) առաջարկներ են ներկայացնում Երևանի քաղաքապետին քաղաքաշինության գործունեության ոլորտում ներդրումների, վարկերի, փոխատվությունների, դրամաշնորհների և օրենքով սահմանված կարգով այլ փոխառու միջոցների ներգրավման, ինչպես նաև բարենպաստ բիզնես միջավայրի զարգացման վերաբերյալ.

թ) իրականացնում է քաղաքի համար լրացուցիչ ներդրումներ ներգրավելու նպատակով պոտենցիալ ներդրողների հետ կայուն փոխհարաբերությունների հաստատման գործընթաց.

ժ) Երևանի քաղաքապետի հանձնարարությամբ կատարում է քաղաքացիների ընդունելություն.

ժա) այլ մարմիններից, պաշտոնատար անձանցից ստանում է Երևանի քաղաքապետարանի քաղաքաշինական գործառույթների և խնդիրների իրականացման հետ կապված անհրաժեշտ տեղեկատվություն և նյութեր.

ժբ) ստորագրում է Գլխավոր ճարտարապետի լիազորությունների իրականացման շրջանակներում պատրաստվող փաստաթղթերը.

ժգ) Գլխավոր ճարտարապետի լիազորությունների շրջանակներում՝ Վարչության կառուցապատման ծրագրերի մշակման և ձևակերպման բաժնի միջոցով, նախապատրաստում է առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, միջնորդագրեր, զեկուցագրեր և այլ գրություններ.

ժդ) Աշխատակազմի քարտուղարին, ըստ անհրաժեշտության ներկայացնում է առաջարկություններ Վարչության աշխատանքներին մասնագետներ, փորձագետներ, գիտական հաստատությունների ներկայացուցիչներ ներգրավելու, ինչպես նաև աշխատանքային խմբեր կազմավորելու համար.

ժե) Երևանի քաղաքապետարանի քաղաքաշինական գործառույթների և խնդիրների իրականացման հետ կապված, ինչպես նաև քաղաքապետի գիտությամբ, կարող է հրավիրել խորհրդակցություններ, դրանց մասնակից դարձնելով համապատասխան մարմինների պաշտոնատար անձանց, մասնագետների, փորձագետների.

ժզ) ըստ անհրաժեշտության ներկայացնում է համապատասխան զեկուցումներ՝ իր կողմից սպասարկվող ոլորտին առնչվող համապատասխան մարմիններում, ինչպես նաև պաշտոնատար անձանց կողմից կատարվող աշխատանքների վիճակի մասին.

ժէ) իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ.

Գլխավոր ճարտարապետն ունի օրենքով, այլ իրավական ակտերով նախատեսված այլ իրավունքներ և կրում է այդ ակտերով նախատեսված պարտականություններ:

8. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՅԻՆ ԱՍՏԻՃԱՆԸ

11. Գլխավոր ճարտարապետին օրենքով սահմանված կարգով շնորհվում է Հայաստանի Հանրապետության համայնքային ծառայության 2-րդ դասի խորհրդականի դասային աստիճան: